



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ

ԲՈՒՒ ԲԱՐԵԿԵՆՈՒԱՆ
2 ՄԱՐՏ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 3-4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (58.1-14)

Այսպէս կ'ըսէ Տէրը.-
«Ուժգին եւ անկաշկանդ պոռա՛, փողի նման ձայնդ բարձրացուր եւ իմ ժողովուրդիս պատմէ իր մեղքերը. Յակոբի սերունդին պատմէ իր անօրէնութիւնները: Ամէն օր զիս կը փնտռեն, կ'ուզեն իմ ճանապարհներս ճանչնալ. կարծես արդարութիւն գործած ժողովուրդ մը ըլլային, կարծես իրենց Աստուծոյն պատուիրաններէն երբեք դուրս ելած չըլլային: Եւ հիմա եկեր արդարութիւն եւ իրաւունք կը փնտռեն քովս, եւ կ'ուզեն Աստուծոյ մօտենալ: Կը հարցը-նեն.- “Ծոմ բռնեցինք, ինչո՞ւ նկատի չա-ռիր. մենք մեզ նեղեցինք, ինչո՞ւ չլսեցիր մեզ”: Որովհետեւ,- կ'ըսէ Տէրը,- ծոմ բռնած ատեն դուք ձեր գիտցածը կ'ընէք դարձեալ. ձեր աշխատաւորները կը հարստահարէք, ձեր հակառակութիւններն ու կռիւները կը շարունակէք եւ խեղճերն ու աղքատները կը տանջէք: Այսպիսի ծոմապահութիւն պէտք չէ՛ ինծի. այսպիսով ձեր ձայնը ինծի չի՛ հասնիր: Միթէ այսպիսի՞ ծոմ ուզեցի. պահանջեցի՞ որ մարդս ինքզինքը չարչրկէ, կամ՝ գլուխը խոնարհեցնէ, ինչպէս եղէզը հովին դիմաց, կամ՝ քուրձի եւ մոխրի վրայ պառկի: Ա՞յս է քու ծոմապահութիւն կոչածդ եւ Տիրոջ համար ընդունելի ծոմապահութեան օրը: Ո՛չ, -կ'ըսէ Տէրը,- ծոմապահութիւնը ա՛յն ատեն միայն իմ ուզածիս պէս կ'ըլլայ, երբ դադրիս անիրաւութիւն գործելէ, դադրիս վաճառքի մէջ խարդախութիւն ընելէ, ազատ թողուս հարստահարուածները եւ անոնց պարտքի անիրաւ մուրհակները պատուես. երբ հացդ անօթիին հետ բաժնես. անտուն աղքատները տունդ ընդունիս, զգեստ տաս անոր որ կը

տեսնես թէ մերկ է, եւ ընտանիքդ ու զաւակդ չզրկես: Այն ատեն քու լոյսդ արշալոյսի պէս պիտի բացուի եւ դուն շուտով պիտի բշկուիս. արդարութիւնդ քեզ պիտի առաջնորդէ եւ Աստուծոյ փառքը ամէն կողմէ քեզ պիտի պաշտպանէ: Այն ատեն երբ աղօթես՝ Աստուած պիտի լսէ քեզ. հազիւ բերանդ բանաս՝ պիտի հասնի քեզի: Եթէ դադրիս տկարները հարստահարելէ, ուրիշներուն սպառնալէ եւ անոնց մասին զրպարտութիւն ընելէ, եւ փոխարէնը յօժար սիրտով հացդ անօթիին տաս ու կարօտեալները կշտացնես, այն ատեն նոյնիսկ եթէ խաւար ըլլաս՝ պիտի լուսաւորուիս, մթութիւնդ կէսօրուան լոյսի պիտի փոխուի. Աստուած ինք պիտի առաջնորդէ քեզ միշտ, պիտի բաւարարէ բոլոր ցանկութիւններդ, պիտի զօրացնէ ոսկորներդ, եւ դուն ջրարբի պարտէզ ու մշտահոս աղբիւր պիտի դառնաս: Զաւակներդ դարձեալ պիտի շինեն քու քաղաքներդ որոնք երկար ատեն աւերակ մնացած էին. անոնց հիմերը պիտի վերականգնեն անասանելի, եւ սերունդէ սերունդ պիտի բնակին. ու պիտի ճանչցուիս որպէս փլատակները նորոգող եւ աւերուած ճամբաները վերաշինող ժողովուրդ: Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (13.11-14.23)

Սիրոյ այս սկզբունքով ընթացէք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակն է որ քունէն արթնանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի՛ մօտ է մեզի քան այն

ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը առնենք՝ ապրելու համար այնպէս ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նմանեցէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ թէ կուռքերու զոհուած միսէն կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Միս ուտողը թող չարհամարհէ՝ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած գայն ընդունեց է: Ո՞վ ես դուն որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած: Բայց վստահ եղէք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ գայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին թէ գԱստուած պաշտելու համար այսինչ օրը աւելի յարմար է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտռողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չդնողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ կուռքերու զոհուած միս ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ չուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ գոհութիւն կը յայտնեն:

Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք. որ կը նշանակէ թէ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ատոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի մեր Տէրը ըլլայ թէ՛ կեանքի եւ թէ՛ մահուան մէջ հաւասարակ: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ գայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին զիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Նս ինձմով կ երդնու՛մ, - կ'ըսէ Տէրը, - որ ամէն ծուկ պիտի խոնարհի առջեւս եւ ամէն լեզու պիտի խոստովանի թէ ե՛ս եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այսուհետեւ դադրինք զիրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանշումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովա-պէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ'ըլլայ ա՛յն մարդուն համար, որ գայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ եղբորդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չե՛ս ըլլար երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս մեռաւ: Աւելի մի՛ տար որ բարի եւ ուղիղ սեպած բանդ հայհոյութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն, Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հաճելի կ'ըլլայ եւ մարդոց գովելի:

Արդ, այսուհետեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Չըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան մաքուր է ինքնին. բայց սխալ է բան մը ուտել, երբ ատիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ: Աւելի ճիշդ է՝ ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ոեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումդ քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛ անոր որ ինքզինքը դատապարտութեան չ'ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ'ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմաքրութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է եթէ ուտէ, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(6.1-21)**

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Զգո՛յշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

«Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝ փող ու թմբուկով մի՛ ընել, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ թէ ի՛նչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու

երկնաւոր Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

«Ուրեմն այսպէ՛ս աղօթեցէք.-

«Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ. թող դայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկիրքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, գորութիւնը եւ փառքը. ամէն:

«Եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

«Երբ ծոմ պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն: Վստահ եղէք, միայն այդ է իրենց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ ծոմ կը պահես, օձէ՛ գլուխդ եւ լուս՝ երեսդ, որպէսզի մարդիկ չգիտնան թէ ծոմ կը պահես. եւ Աստուած որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը կրծեն ու կը փտեցնեն եւ կամ գողերը տանդ պատը քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը երկիրքի մէջ դիզեցէք, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար կրծել եւ փտեցնել զայն եւ ոչ ալ գողերը կրնան տանդ պատը քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ուր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

ԱՅՅԵԼԵՅԷ՛Ր
ԵԿԵՂԵՅՈՅՍ
ԴԻԱՏԵՏՈՐ ԷՁԸ
ԵՒ
ՁԵՐ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՄԸ յԱՅՏԵՅԷՐ
(like).

[www.facebook.com/
SourphagopChurchMontreal](http://www.facebook.com/SourphagopChurchMontreal)

ԱՅՅԵԼԵՅԷ՛Ր ԱՎ
ԵՒ
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ ԿԱՅԷՁԸ՝
www.sourphagop.net

ՀԻՄՆԱԴՆԵՐՈՒՄ ԱՅԵԼՈՒԹԻՄ

Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Աւ. Քինյ. Գոյունեանի.
514 909 5203 քիւիմ:

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿԸ Ե-ՆԱՄԱԿՈՎ
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ
ՈՒՊԱՐԿԵՅԷՐ
eglise58@sourphagop.com

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄԸՆԵՐԸ
ԱՆՆՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷՐ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅ ԳՐԱՄԵՆԵԱԿ:

ՄԵԾ ՊԱՅՈՑ ԼՍԱՐԱՆ ՅԵՏ ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Սկիզբ ժամերգութիւններուն՝ երեկոյեան ժամը 7.00

1

Չորեքշաբթի, 5 Մարտին,
յետ Հսկումի ժամերգութեան
«Հաւատամբ...յապաշխարութիւն»
կը խորհրդածէ
Բողջ. Յակոբ վրդ. Եագուպեան

4

Միջինը, Չորեքշաբթի, 26 Մարտին,
յետ Հսկումի ժամերգութեան
Բոլոր հաւատացեալներուն բաշխում
Չարեհ Արք. Ազնաւորեանի՝ **«Մեկնութիւն Հայ
Եկեղեցւոյ Հաւատամբի»** գիրքին Նուր՝
տ. եւ տիկ. Կարօ եւ Սալբի Շահինեան

2

Չորեքշաբթի, 12 Մարտին,
յետ Հսկումի ժամերգութեան
Չարեհ Արք. Ազնաւորեանի՝
«Մեկնութիւն Հայ Եկեղեցւոյ Հաւատամբի»
Գիրքը կը ներկայացնէ
Բրշ. Հրակ կիսարկ. Պանքեան

5

Չորեքշաբթի, 2 Ապրիլ,
յետ Հսկումի ժամերգութեան
Ս. Հոգին **«որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարես
եւ յաւետարանս...»** եւ աղօթքը
կը խորհրդածէ
Բրշ. Կարօ սրկ. Նոխստեան

3

Չորեքշաբթի, 19 Մարտին,
յետ Հսկումի ժամերգութեան
Հաւատքի դաստիարակութիւնը ըստ
Հայ Եկեղեցւոյ Հաւատամբին
կը խորհրդածէ
Բրշ. Թորոս սրկ. Պապիկեան

6

Չորեքշաբթի, 9 Ապրիլ,
յետ Հսկումի ժամերգութեան
«Հաւատամբ...ի մի Մկրտութիւն»ը
եւ մանուկներու Մկրտութեան մասին
կը խորհրդածէ հովիւը՝
Արժ. Տ. Գառնիկ ԱԼ. Ընկ. Գոյունեան

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

*Մեծ Պահոց Հինգշաբթի Օրերուն
(6, 13, 20, 27 Մարտ, եւ 3, 10 Ապրիլ)*

Սկիզբ ժամերգութիւններուն՝
ժամը 11.00-ին

Ապա

խորհրդածութիւններ

Նիւթ՝

«Տիրոջմէ Յիշուիլ, Յիշել Տերը»